

ՏԽՐՈՒՆԻ**ՀԱՆԳԻՍՏ****Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՅԱԵԱՆԻ****(1945-2020)**

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը վիշտն ունեցաւ կորսնցնելու իր ծառայասէր Միաբաններէն, Ս. Աստուածածանայ Տաճարի երկարամեայ տեսուչ՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայեանը:

Հանգուցեալը՝ աւագանի անունով Միհրան, ծնած էր Երուսաղէմ՝ 1945-ին: Նախնական կրթութիւնը ստացած էր Սբ. Թարգմանչաց վարժարանին մէջ, որուն նախակրթարանի ընթացքը աւարտած էր 1959-ին: Ապա հետեւած էր արհեստի:

Կրօնաւորելու փափաքով 1977-ին դիմած էր վանական իշխանութեան եւ ձեռնադրուած էր Սարկաւագ:

1978-ին օրուան Լուսարարապետ՝ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի ձեռամբ ձեռնադրուած էր կուսակրօն աբեղայ, որ իր անունով ընծայեալը վերակոչած էր Տ. Հայրիկ Աբեղայ:

Իր 40 եւ աւելի տարիներու ծառայութեան ընթացքին, լուսահոգի Հայր Սուրբը եղած էր Աւագ Թարգման, Տեսուչ՝ Ս. Փրկչայ Վանքի, Եաֆայի, Հայֆայի, Ռամլէի եւ Համբարձման լերան: Կրցած էր յաջողցնել բազմաթիւ շինարարական աշխատանքներ՝ նորոգել տուած էր Հայոց գերեզմանատունը, շինել տուած էր վարդապետաց գերեզմանատունը եւ հանգստեան քարը: Երկար տարիներ Տեսուչն էր Ս. Աստուածամօր Տաճարի:

Հանգուցեալին մարմինը Մայր Տաճար փոխադրուեցաւ 12 Հոկտեմբեր, 2020-ին, երեկոյեան ժամը 4-ին, շարականներու երգեցողութեամբ դագաղը զետեղուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի ատեանին մէջ:

Յաջորդ օրը՝ 13 Հոկտեմբեր, 2020-ին, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հանգրստեան Ս. Պատարագ մատուց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: «Ողջոյն»-էն առաջ դագաղը բեմ հանուեցաւ, ուր Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը կատարեց «Վերջին Օծումը» եւ խօսեցաւ դամբանականը, դրուատելով քառասուն տարիներու եկեղեցասէր գործունէութիւնը հանգուցեալին, որմէ ետք նախ Միաբանութիւնը եւ ապա ժողովուրդը մօտեցաւ աջը առնելու հանգուցեալին:

Ժամը 10:30-ին Մայր Տաճարին մէջ կատարուած հանգստեան կարգէն ետք կազմըւեցաւ թաղմանական թափօր, մասնակցութեամբ ամբողջ Միաբանութեան, շարականներով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ առաջնորդելու հանգուցեալը իր յաւիտենական հանգիստին: Յուղարկաւորութեան արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Հայր Հայրիկի մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի Միաբանական գերեզմանատան մէջ:

Իր մահով՝ Պատրիարքութիւնը կը կորսնցնէ իր պարտականութեանց գիտակից, նուիրեալ ու ծառայասէր եկեղեցականը: Բոլորով սրտիւ կ'աղօթենք հանգուցեալ Հայր Սուրբի հոգիին համար, թող Երկնաւոր Հայրը, իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր բարի հոգին եւ իր երկնային մխիթարութիւնը պարգեւէ Միաբանութեանս անդամներուն եւ անոր անմիջական հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՊԱՏՐԻԱՐԷ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԿՈՂՄԷ ԽՕՍՈՒԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ Ի Ս. ՅԱԿՈԲ

«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք, որ հաւատայ յիս թէ եւ մեռանիցի՝ կեցցէ ի սպառ»:

«Ես ճանապարհ եմ, ճշմարտութիւն ու կեանքը. ան որ ինծի կը հաւատայ, թէ եւ կը մեռնի, սակայն յաւիտեան պիտի ապրի»:

Քրիստոս այս խօսքերը ուղղեց իր հետեւորդներուն, ըսելով թէ ան որ հաւատար իրեն եւ ապրէր Աստուծոյ կամքին համաձայն այլեւս պէտք չունէր վախնալու մահէն, որովհետեւ ան պիտի արժանանար յաւիտենական կեանքին: Եւ ես խորապէս կը հաւատամ, որ մեր Փրկչին այս խօսքը եղաւ անկիւնադարձը մեր բոլորին սիրելի Հայր Հայրիկ Գալայճեանին, որ տակաւին պատանի տարիքէն հաւատաց մեր այսօրուան բնաբանին եւ գիտցաւ մարդկօրէն եւ ըստ կարելւոյն արտացոլացնել աստուածորդւոյն խօսքերը իր կեանքին ընթացքին:

Եկեղեցին միշտ անբաժան մասնիկը եղած էր իր կեանքին: Ան փոքր տարիքէն կանոնաւոր կերպով կ'իջնէր Աստուածամօր տաճարը ծառայելու, եւ ապագային կեանքի պայմանները այնպէս բերին որ օր մըն ալ արժանացաւ անոր տեսչութեան պաշտօնին, որուն ծառայեց ամբողջական նուիրումով եւ հաւատարմօրէն: Շատ բան կարելի է ըսել հանգուցեալ Հայր Սուրբին մասին, սակայն անձնագոհութիւնն ու ծառայելու պատրաստակամութիւնը միայն արդէն ամենագեղեցիկ եւ լաւագոյնս կը յայտնէին Քրիստոսի եւ Անոր Եկեղեցւոյ նկատմամբ իր ունեցած ուղիղ ըմբռնումն ու մօտեցումը: Քրիստոնէութեան բարի սերմը արգաւանդ ու բերրի հող մը գտաւ Հայր Հայրիկի սրտին մէջ, որուն գլխաւոր մշակները եղան անկասկած իր ծնողները, որոնք քաջալերեցին զինք որ փոքր տարիքէն նուիրուէր իր ժողովուրդի եւ Եկեղեցւոյ աւանդութիւններուն: Անկասկած Ս. Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան համար ծանր պիտի ըլլայ կո-